ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____2023թ.

ՖՈՐՏՈՒՆԱ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԸ, «ԹՂԹԱՊԱՆԱԿ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐ
ԱՆԱՀԻՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ /էլ. հասցե՝ txtapanak@fortunatv.am/

Ի պատասխան Ձեր՝ 19.01.2023թ. գրության.

Հարգելի տիկին Կարապետյան, Ձեր հարցումներին ի պատասխան՝ տեղեկացնում եմ որ.

1. Վանաձորի Ա. Խլղաթյանի անվան N18 միջնակարգ դպրոցում տեղ գտած միջադեպի մասին սոցիարթակներում բարձրաձայնվելուց հետո Լոռու մարզպետարանն անմիջապես ձեռնարկել է անհրաժեշտ բոլոր միջոցները խնդրի կարգավորման ուղղությամբ: Լոռու մարզպետարան են հրավիրվել խնդիրը բարձրաձայնող ուսուցիչը և տնօրենը: ԼՄ ԿՄՍ վարչության պետի և աշխատակիցների կողմից այց է իրականացվել դպրոց: Կայացած հանդիպման ընթացքում մանկավարժական աշխատողները հավաստել են, որ դպրոցում աշխատանքներն ընթանում են բնականոն հունով և պատրաստակամություն են հայտնել պահպանել բնականոն աշխատանքային մթնոլորտը:
2. Դպրոցի բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովման պատասխանատուն ուսհաստատության տնօրենն է: Որպես գործատու՝ տնօրենն է վերահսկում ուսհաստատության աշխատակիցների գործառույթների պատշաճ իրականացումը:
3. ԼՄ գործում է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում: Մարզպետի՝ 2023թ. հունվարի 19-ի թիվ 24-Ա որոշմամբ Վանաձորի թիվ 18 մ/դ-ի տնօրեն Թ. Թադևոսյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 21-րդ մասի պահանջները չպահպանելու, այն է՝ դպրոցում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը չապահովելու համար:
4. ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից Լոռու մարզպետարանն այս խնդրի առնչությամբ հանձնարարական չի ստացել:

20/01/2023

X _____
ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

կատ. ԼՄ ԿՄՍ վարչո(թյան կրթո(թյան բաժին
հեռ. /0322/ 40161